

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մենք՝ պատասխանատու անձինք, հավաստիացնում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են Ընկերության ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման մարմինների միջանկյալ զեկույցում ներառված տեղեկությունները ճշգրիտ և լիարժեք են:

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ

Անուն, Ազգանուն	Պաշտոն	Պատասխանատվության շրջանակ
Վահրամ Բեգլարյան	տնօրենների խորհրդի անդամ, գլխավոր տնօրեն	<p>Որպես գլխավոր տնօրեն՝</p> <ul style="list-style-type: none"> ✓ տնօրինում է Ընկերության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կատարում Ընկերության անունից, ✓ ներկայացնում է Ընկերությունը ԼՂՀ-ում և արտասահմանում, ✓ գործում է առանց լիազորագրի, ✓ տալիս է լիազորագրեր, ✓ սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային, ✓ բանկերում բացում է Ընկերության հաշվարկային (այդ թվում՝ տարադրամային) և այլ հաշիվներ, ✓ Ընկերության Խորհրդի հաստատմանն է ներկայացնում Ընկերության աշխատանքային կանոնակարգը, առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների կանոնադրությունները, Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքը, ✓ իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը, ✓ սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Ընկերության աշխատակիցներին, ✓ աշխատակցի նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ: <p>Որպես խորհրդի անդամ՝</p> <ul style="list-style-type: none"> ✓ մասնակցել Խորհրդի նիստերին, մասնակցել Խորհրդի որոշումների քվեարկությանը:

Անուն, Ազգանուն	Պաշտոն	Պատասխանատվության շրջանակ
Սպարտակ Թևոսյան	Տնօրենների խորհրդի անդամ	<ul style="list-style-type: none"> ✓ մասնակցել խորհրդի նիստերին, ✓ մասնակցել խորհրդի որոշումների քվեարկությանը:
Կառլեն Պետրոսյան	Տնօրենների խորհրդի անդամ	<ul style="list-style-type: none"> ✓ մասնակցել խորհրդի նիստերին, ✓ մասնակցել խորհրդի որոշումների քվեարկությանը:
Սլավա Գաբրիելյան	Արտադրության և ղեկավարման գծով տնօրեն	<ul style="list-style-type: none"> ✓ կատարում է Ընկերության էլեկտրահիդրոկայանների էլեկտրաէներգիայի արտադրության պլանավորում և աշխատանքի ռեժիմների մշակում
Ժան Հովհաննիսյան	Ֆինանսների և էկոնոմիկայի գծով տնօրեն	<ul style="list-style-type: none"> ✓ Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության կառավարում
Արայիկ Դավթյան	Գլխավոր հաշվապահ	<ul style="list-style-type: none"> ✓ իրականացնում է հաշվապահական հաշվառման վարումը, ֆինանսական հաշվետվությունների ժամանակին կազմումն ու ներկայացումը, ✓ աջակցում է Ընկերության սեփականության պահպանման, նյութական, աշխատանքային և ֆինանսական ռեսուրսների խնայողաբար օգտագործման նկատմամբ վերահսկողությանը, ✓ կազմակերպում է հաշվապահական հաշվառման քաղաքականությունը, ✓ գլխավորում է նախահաշիվների կազմման սկզբնական հաշվառման փաստաթղթերի օրինակելի ձևերի նախապատրաստման աշխատանքները:

**«ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ
2010Թ. ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

Կառավարման մարմինների տարեկան զեկույց

1) Թողարկողի բիզնեսի արդյունքների և զարգացման իրական պատկերի նկարագիրը՝ ներառյալ այն հիմնական ռիսկերի կամ անորոշությունների նկարագիրը, որի հետ առնչվել կամ առնչվում է թողարկողը: Այս նկարագիրը պետք է հավասարակշռված և համակողմանի վերլուծության ենթարկի թողարկողի ընդհանուր վիճակը, բիզնեսի արդյունքները և զարգացումը: Վերլուծությունները պետք է հնարավորություն տան պատկերացում կազմել թողարկողի ընդհանուր վիճակի, բիզնեսի արդյունքների և զարգացման մասին՝ ներառելով թողարկողի բիզնեսին յուրահատուկ ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշների վերլուծությունը:

Ընկերության գործունեության հիմնական տեսակը էլեկտրաէներգիայի արտադրությունն է:

Ընկերությունը հիմնականում առնչվում է հետևյալ ռիսկերի և անորոշությունների հետ.

Արժույթային ռիսկեր. Այդ ռիսկերը ներառում են ՀՀ դրամի և այլ արժույթների փոխարժեքի զգալի փոփոխությունների հնարավորությունը, ինչպես նաև ՀՀ և ԼՂՀ դրամային կառույցների կողմից միջամտության կամ փոփոխությունների հնարավորությունը:

Բնակլիմայական պայմանների ռիսկեր. Բնակլիմայական պայմաններն ունեն էական ազդեցություն ընկերության գործունեության վրա: Ընկերության հասույթը էականորեն պայմանավորված է ջրի հոսքի ծավալներով: Չնայած նրան, որ նախկին մի քանի տարիների ջրի հոսքի ցուցանիշների վերլուծությունը թույլ է տալիս բավականին մեծ ճշտությամբ կատարել կանխատեսումներ, այնուամենայնիվ, բնակլիմայական գործոնով է պայմանավորված ընկերության հասույթի ծավալը և հետևաբար ֆինանսական ցուցանիշները:

Նշված ռիսկերն ու անորոշություններն էապես կազդեն նաև հաջորդ հաշվետու ժամանակաշրջանի վրա:

Ներկայում ընկերությունն իրականացնում է երեք նոր փոքր ՀԷԿ-երի (Մատաղիս 1, Մատաղիս 2 և Թղեր 2) շինարարություն: ՀԷԿ-երի շինարարության համար անհրաժեշտ գումարի մի մասն ընկերությունը ներգրավել է իր բաժնետոմսերի հրապարակային տեղաբաշխումների միջոցով, իսկ մնացած մասը հավաքում է փոխառու և սեփական միջոցներով:

2010 թ.-ի ընթացքում ընկերության արտադրության ծավալը կազմել է մոտ 177,638,900 կվտ/ժ էլեկտրաէներգիա, ինչը կազմում է մոտ 1,614,897,000 ՀՀ դրամ:

Ընկերության արտադրված էլեկտրաէներգիայի ծավալները, սակագները և հասույթը՝ ըստ ամիսների բերված է թիվ 1 աղյուսակում:

Աղյուսակ 1

«Արցախ ՀԷԿ» ԲԲԸ արտադրված էլեկտրաէներգիայի ծավալները, սակագները և հասույթը՝ ըստ ամիսների*

Ամիս	Արտադրանք (կվտ/ժ)	Սակագին (դրամ)	Հասույթ (դրամ)
01.2010. «Սարսանգ»	16047600	9	144428400
02.2010. «Սարսանգ»	14596800	9	131371200
03.2010. «Սարսանգ»	15188400	9	136695600

Ամիս	Արտադրանք (կվտ/ժ)	Սակագին (դրամ)	Հասույթ (դրամ)
04.2010. «Սարսանգ»	15336000	9	138024000
05.2010. «Սարսանգ»	25888000	9	232992000
06.2010. «Սարսանգ»	17184400	9	154659600
06.2010. «Թլղի-1»	198450	18	3572100
07.2010. «Սարսանգ»	9781600	9	88034400
07.2010. «Թլղի-1»	446390	18	8035020
08.2010. «Սարսանգ»	2904400	9	26139600
08.2010. «Թլղի-1»	158550	18	2853900
09.2010. «Սարսանգ»	8423600	9	75812400
09.2010. «Թլղի-1»	112840	18	2031120
10.2010. «Սարսանգ»	15890000	9	143010000
10.2010. «Թլղի-1»	349440	18	6289920
11.2010. «Սարսանգ»	17046400	9	153417600
11.2010. «Թլղի-1»	290290	18	5225220
12.2010. «Սարսանգ»	17557600	9	158018400
12.2010. «Թլղի-1»	238140	18	4286520
Ընդամենը	177638900		1614897000

* Ջրի տեսակարար կշիռը 1 մլն կվտ/ժամ արտադրանքի համար կազմել է 4.44 խոր. մետր:

2010 թ.-ի ընթացքում ընկերությունը վերցրել է մոտ 3,453,391 հազ. դրամի վարկ, այն դեպքում, երբ նույն ժամանակահատվածում մարել է 2,281,862 հազ. դրամի վարկ:

Ընկերության ամփոփ ֆինանսական ցուցանիշները և գործակիցները բերված են թիվ 2 և թիվ 3 աղյուսակներում:

ԱՄՓՈՓ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ 2010թ.

Ցուցանիշ	Հազ. դրամ
Արտադրանքի իրացումից հասույթ	1,614,897
Իրացված արտադրանքի ինքնարժեք	-310,009
Իրացման ծախսեր	-3,573
Վարչական ծախսեր	-123,005
Գործառնական գործունեությունից շահույթ	1,163,350
2010թ. շահույթ	1,098,854
Դեբիտորական պարտք	592,044
Կրեդիտորական պարտք	4,168,761

ԱՄՓՈՓ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐ 2010թ.

Ցուցանիշի անվանումը	01.01.2011 թ.
Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS)	164.9
Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE)	14.3 %
Ակտիվների շահութաբերություն (ROA)	10.1 %
Զուտ շահույթի մարժա (NPM)	68.0 %
Կապիտալի համարժեքության գործակից	67.7 %
Ֆինանսական կախվածության գործակից	47.8 %
Բացարձակ իրացվելության գործակից	0.6
Ընթացիկ իրացվելության գործակից	1.3
Ընդհանուր իրացվելության գործակից	1.3
Դեբիտորական պարտքերի շրջանառելիության գործակից	5.5
Դեբիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով	66.0
Պաշարների շրջանառելիության գործակից	14.4
Պաշարների շրջապտույտի տևողությունն օրերով	25.4
Կրեդիտորական պարտքերի շրջանառելիության գործակից	0.1
Կրեդիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով	3771.4

2) Այն կարևոր դեպքերի նկարագիրը, որոնք տեղի են ունեցել հաշվետու ժամանակաշրջանի սկզբից մինչև զեկույցը պատրաստելու օրը: Կարևոր դեպքերը բոլոր այն դեպքերն են, որոնք էական ազդեցություն են ունեցել թողարկողի ֆինանսական վիճակի վրա, ինչպես նաև այլ դեպքերը, որոնք թողարկողի կարծիքով կարևոր են և (կամ) ողջամիտ ներդրողը կկարևորեր ներդրումային որոշումներ կայացնելիս:

- 2010 թ. ապրիլի 11-ին տեղի ունեցավ Թրդի-1 ՀԷԿ-ի բացումը:
- 2010 թ. ապրիլի 27-ին տեղի ունեցավ բաժնետերերի ընդհանուր տարեկան ժողովը: Ժողովն ի թիվս այլ հարցերի որոշեց նաև վճարել շահութաբաժիններ՝ մեկ բաժնետոմսի անվանական արժեքի նկատմամբ 10 տոկոս եկամտաբերության հաշվարկով, ինչպես նաև մասհանումներ գլխավոր պահուստին՝ զուտ շահույթի 6.82 տոկոսի չափով:
- 2010 թ. հոկտեմբերի սկզբին Չեխիայից ներ են մուծվել «Թրդի-2» ՀԷԿ-ի համար պատվիրված Չեխական արտադրության հիդրոտուրբիններ և գերմանական արտադրության գեներատորներ:

2010 թ. նոյեմբերի 04-ից մինչև դեկտեմբերի 06-ը Չեխիայից հրավիրված «CKD BLANSKO SMAIL HIDRO» ընկերության մասնագետների կողմից կատարվել է «Թրդի-2» ՀԷԿ-ի հիդրոսարքավորումների մոնտաժային աշխատանքները:

- 2010 թ. օգոստոսի 20-ին կայացած «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ տնօրենների խորհրդի նիստում ընդունվել է որոշում լրացուցիչ տեղաբաշխել 1,400,000 հատ սովորական անվանական բաժնետոմս:

2010 թ. հոկտեմբերի 29-ին «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ բաժնետոմսերի ազդագիրը գրանցվել է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից:

1 բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 1000 ՀՀ դրամ:

1 բաժնետոմսի տեղաբաշխման գինը կազմում է 1110 ՀՀ դրամ:

Որպես թողարկման կազմակերպիչ, տեղաբաշխող և հաշվարկային բանկ հանդես է գալիս «Արմավիսբանկ» ՓԲԸ-ն:

Բաժնետոմսերի տեղաբաշխումն իրականացվել է Ընկերության բաժնետերերի կողմից բաժնետոմսերի ձեռք բերման նախապատվության իրավունքի կիրառման միջոցով:

Բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունքից օգտվել են 50 բաժնետերեր, որոնց կողմից ձեռք են բերվել 114,492,060 ՀՀ դրամ ընդհանուր ծավալով 103,146 հատ բաժնետոմսեր:

2010 թ. դեկտեմբերի 22 դրությամբ ավարտվել է բաժնետոմսերի տաղաբաշխումը: Բոլոր 1,400,000 հատ բաժնետոմսերը տեղաբաշխվել են:

2010 թ. դեկտեմբերի 27-ին կայացած «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ տնօրենների խորհրդի նիստին ընդունվել է որոշում Ընկերության կանոնադրական կապիտալի մեջ կատարել փոփոխություն՝ կանոնադրական կապիտալը ավելացնել 1,400,000,000 դրամով, սահմանելով 7,362,074,000 դրամ: 29.12.2010 թ. Կանոնադրության փոփոխությունը գրանցվել է ԼՂՀ արդարադատության նախարարության պետական ռեգիստրի Ստեփանակերտի տարածքային բաժնի կողմից:

- 2011թ. մարտ-ապրիլ ամիսներին Չինաստանից հրավիրված մասնագետների կողմից կատարվեց «Մատաղիս-2» ՀԷԿ-ի սարքավորումների մոնտաժ:

3) Թողարկողի հետագա հնարավոր զարգացման նկարագիրը:

- 2011թ. հունիս ամսին նախատեսվում է «Թրդի-2» ՀԷԿ-ի շինարարության ավարտը:
- 2011թ. օգոստոս ամսին նախատեսվում է «Մատաղիս-1» ՀԷԿ-ի շինարարության ավարտը:
- 2011թ. սեպտեմբեր ամսին նախատեսվում է «Մատաղիս-2» ՀԷԿ-ի շինարարության ավարտը:
- Ընկերության 2011թ. էլեկտրաէներգիայի արտադրության կանխատեսումները բերված են թիվ 4 աղյուսակում:

«Արցախ ՀԷԿ» ԲԲԸ 2011թ.էլեկտրաէներգիայի արտադրության կանխատեսումները

h/h	ՀԷԿ-ի անվանումը	ամիսներ												մլՎ. Կվտ/ժամ
		I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	ընդամենը տարի
1.	Սարսանգ ՀԷԿ	15.00	15.00	0.00	0.00	0.00	6.50	6.70	11.00	10.00	12.00	13.00	13.00	102.20
2.	Թրդե 1.	0.25	0.35	0.63	1.07	1.27	1.27	1.29	1.01	0.58	0.52	0.55	0.44	9.23
3.	Թրդե 2.							1.53	1.23	0.77	0.68	0.91	0.73	5.85
5.	Մատադիս 1.									2.11	2.52	2.65	2.58	9.86
6.	Մատադիս 2.										1.61	1.69	1.65	4.95
	ընդամենը	15.25	15.35	0.63	1.07	1.27	7.77	9.52	13.24	13.46	17.33	18.80	18.40	132.09



"ՍՕՍ-ԱՈՒԴԻՏ" ՍՊԸ
"SOS-AUDIT" LTD

Անկախ աուդիտորական եզրակացություն № 14

«Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվեփակված տարվա ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ

Ներկայացվում է «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության ղեկավարությանը

Մեր կողմից իրականացվել է «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կից ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, որոնք ներառում են 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվապահական հաշվեկշիռը, նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և կից ծանոթագրությունները:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է Հայաստանի Հանրապետության Հաշվապահական Հաշվառման Ստանդարտների համաձայն ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվություններ՝ զերծ խարդախության կամ սխալների արդյունքում առաջացած էական խեղաթյուրումներից:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մենք պատասխանատու ենք Աուդիտի Միջազգային Ստանդարտներին համապատասխան մեր կողմից իրականացված աուդիտի հիման վրա նշված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր արտահայտած կարծիքի համար: Այդ ստանդարտներով պահանջվում է աուդիտը պլանավորել և անցկացնել՝ ֆինանսական հաշվետվություններն էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ ողջամիտ երաշխիքներ ձեռք բերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են ֆինանսական հաշվետվություններում ու համապատասխան ծանոթագրություններում արտացոլված տվյալները հիմնավորող փաստերի ձեռքբերման նպատակով մշակված ընթացակարգեր, որոնց ընտրությունը կախված է խարդախությունների և սխալների հետևանքով ֆինանսական հաշվետվություններում էական խեղաթյուրումների առկայության ռիսկերի վերաբերյալ աուդիտորական գնահատումներից:

ԳԳ, Երևան 0037, Ա. Տիգրանյան 38; Դեռ./ֆաքս՝ (+374 10) 20 11 51; Էլ-փոստ՝ sosaudit@yandex.ru, sosaudit@web.am
«Յունիբանկ» ՓԲԸ; հ/հ 241061006276

38 A. Tigranyan, Yerevan 0037; RA; Tel./fax: (+374 10) 20 11 51; E-mail: sosaudit@yandex.ru, sosaudit@web.am
"Unibank" CJSC; CA 241061006276

Ռիսկերի գնահատումները կատարելիս աուդիտորը մշակում է համապատասխան ընթացակարգեր՝ ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության գնահատման, և ոչ՝ ընկերության ողջ ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք կազմելու, համար: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների և ղեկավարության կողմից կատարված գնահատումների, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ համապատասխան աուդիտորական ապացույցներ մեր կարծիքն արտահայտելու համար:

Կարծիք

Մեր կարծիքով կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության ֆինանսական վիճակը, ինչպես նաև նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքները և դրամական հոսքերը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության Հաշվապահական Հաշվառման Ստանդարտների:

8 ապրիլի 2011թ.
ՍՕՍ-Աուդիտ ՍՊԸ



Գնել Խաչատրյան
Աուդիտոր